

ԲԱՌԱԽՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ԼԵԶԱՎԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Ստեղծման պահից իսկ պատճենումը ոչ միայն լեզվական, այլև մշակութային երևույթ է, որի ճակատագիրը զգալի չափով կախում ունի նշյալի (դեմոստատի) հասարակական ու մշակութային կարևորությունից: Պատճենման երևան գալու փաստը, անկախ նրա տեսակից, դեռևս լեզվական արժեք չունի: Պատճենված միավորը գոյության իրավունք է նվաճում միայն այն ժամանակ, երբ յուրացվում է, այսինքն՝ ընդունվում տվյալ հանրության կողմից և, աստիճանաբար կորցնելով օտարածին դրոշմը, տարածվում ու ընկալվում որպես մայրենի լեզվի իրողություն: Այս դեպքում ոչ միայն երկլեզվյան, այլև բացատրական բառարաններն արձանագրում են այն որպես լեզուն հարստացնող նորաբանություն, որ էական նշանակություն ունի: Եթե թարգմանական բառարանում այս կամ այն բառի, բառակապակցության կամ առանձին իմաստի գոյությունը դեռևս յուրացված լինելու ցուցիչ չէ, այլ հաճախ անխուսափելի անհրաժեշտություն, ապա բացատրական բառարանում արձանագրված լինելը, ուր բառացանկի ուշադիր ու խստապահանջ ընտրություն է կատարվում, յուրացման շատ ավելի հավաստի ու ակնհայտ փաստ է: Ինքին հասկանալի է, որ պատճենող լեզվի օրինաչափությունների խախտումով կազմված միավորները, որպես կանոն, մնում են դիպվածաբանությունների կամ ունենում կարճատև գոյություն: Բացի դրանից, յուրաքանչյուր լեզու անդադար հղկում է իր բառապաշարը: Այս առումով նույնիսկ կանոնավոր կազմություն ունեցող որոշ պատճենումներ հետազայում փոխարինվում են ավելի բարեհունչ ու լիարժեք բառամիավորներով:

Պատճենված բառի, կայուն բառակապակցության ու ասույթի, ինչպես նաև նշանակության լեզվում ամրանալու պարտադիր նախապայմանը նրա կիրառության անհրաժեշտությունն է, գործածության պահանջը: Սակայն նորամուծության յուրացման կարևոր նախադրյալը լինելով հանդերձ, այն միակը չէ: Կիրառության անհրաժեշտությունը զալիս է հաստատելու, որ պետք է գոյություն ունենա տվյալ հասկացությունն արտահայտող միավոր, որի կազմության ընտրությունն արդեն պայմանավորված է լեզվական բնույթի գործոններով: Գոյատևում է այն միավորը, որն ավելի լավ է կատարում հաղորդակցման միջոցի գործառնությունը, այսինքն՝ առավել ճշգրիտ կերպով է վերարտադրում բնօրինակի նշանակությունը, կազմված է պատճենող լեզվին հատուկ բառակազմական ու շարահյուսական կաղապարներով, բարեհունչ է ու ներդաշնակ, մտնում է համապատասխան բառափնջերի մեջ և չունի համաճումներ:

Ստորև ներկայացվող օրինակները արևմտահայերենի ֆրանսերենից և արևելահայերենի ռուսերենից կատարած պատճենումներն են: Հիշենք, որ ռուսերեն բառամիավորներից շատերն, իրենց հերթին, պատճենումներ են եվրոպական լեզուներից:

Շեղումները հիմնականում հանգում են երեք՝ ա) շարահյուսական, բ) բա-

ռակագմական և գ) իմաստային համակարգերում գործող օրինաչափությունների անտեսմանը, որոնք փոխկապակցված են:

Փաստացի նյութը ցույց է տալիս, որ պատճենների հայերենի շարահյուսական օրինաչափությունները պահպանվել են, իսկ բառակազմական կանոններից եղել են որոշ շեղումներ: Խախտումները գլխավորապես վերաբերում են իմաստային համակարգին:

Բառային մակարդակում շարահյուսական կանոնների պահպանումը նույնանում է բարդության բաղադրիչների փոխադարձ դիրքը չփոխելու հետ և, դրանով իսկ, առնչվում բառակազմական օրինաչափություններին: Եվ քանի որ հայերենում բաղադրության առաջին մասն է ըստ իմաստի լրացնում, որոշում երկրորդին, ապա պատճենումը հայերենի կանոնների համաձայն է կազմված, եթե առաջին բաղադրիչը դառնում է երկրորդի լրացումը: Հակառակ դեպքում այն օտարակազմ է: Այս տեսակետից պատճենումների մեծագույն մասը չի հակասում հայերենի բառակազմական կանոններին: Այսուհանդերձ օտարաբան կազմություն ունեցող որոշ պատճենումներ կիրառության ուժով պահպանվել ու գործածական են. օր.՝ արտակենտրոն (*ֆր. excentrique, ռուս. эксцентричный*), գերմարդկային (*ֆր. surhumain, ռուս. сверхчеловеческий*), որոնք սովորական բաղադրության եղանակով պիտի նշանակեին «արտաքին, դրսի կենտրոն» և «գերապես մարդկային, շատ մարդկային»: Օրինակները մեկ անգամ ևս վկայում են այն մասին, որ բառակազմական համակարգը որոշակիորեն կայուն լինելով հանդերձ, երբեմն ենթակա է արտաքին ազդեցությանը:

Ամհաջող պատճենումների մեծ մասը երկու լեզուների իմաստային համակարգերի արհեստական նույնացման արդյունք է: Հաճախ անտեսվում են բազմիմաստ բառերի իմաստային ծավալի տարբերությունները և զուգորդելիության հնարավորությունները: Այս դեպքում ի հայտ են գալիս իմաստային նոր հարակցումներ, որոնցից ոչ բոլորն են ընդունվում հանրության կողմից լեզվամշակութային նոր միջավայրում և վերջնական գոյության իրավունք չեն ստանում: Այսպես, վերջին տասնամյակներին գրական արևելահայերենում ոչ սակավաթիվ բառեր պատճենելով համապատասխան ռուսերեն բառերի իմաստային կառուցվածքը, սկսել են գործածվել նոր նշանակություններով կամ նրբիմաստներով. օր.՝ անդրադառնալ – ազդել, ներգործել – *отразиться, сказаться* (շրջապատը վատ է անդրադառնում՝ «շրջապատը վատ է ազդում, վատ ազդեցություն է գործում, վատ է ներգործում» նշանակությամբ), ծեռագիր (ոճ) – *почерк* (երգչախմբի ձեռագիրը՝ «երգչախմբի ոճը՝ կատարողական արվեստը» նշանակությամբ), անցնել – *проходить* (հանդիպումն անցել է Փարիզում՝ «հանդիպումը տեղի է ունեցել՝ ընթացել է Փարիզում» իմաստով), գնալ – *идти* (թատերաշրջաններից մեկում այդ գործը գնացել է 60 անգամ՝ «քեմադրվել է, ներկայացվել է» իմաստով) և այլն:

Յուրացմանն առնչվող իմաստային օրինաչափությունների կապակցությամբ հարկ է նշել, որ բառապատճենումները երբեմն չեն վերարտադրում բնօրինակի իմաստը, եթե վերջիններիս ներքին ձևն ու արդի նշանակությունը չեն համընկնում, այսինքն՝ բաղադրիչ տարրերը չեն մատնանշում բովանդակության և արտահայտության կապը: Այս դեպքում ելակետային, սակայն այ-

սօրվա ընկալմամբ մթազնած ու արժեզուրկ ներքին ձևը սխալ իմաստ է հաղորդում պատճենմանը, քանի որ նրա միջոցով վերարտադրվում է օտար բանի ստուգաբանությունը միայն: Իսկ բառարանագիրներն ու թարգմանիչները ուղղակիորեն տուրք տալով ստուգաբանությանը՝ երբեմն ստեղծում են պատճենումներ, որոնք զուրկ են հաղորդակցական արժեքից: *Հմմտ. գեղածաղիկ* (խմբորի տեսակ, և ոչ՝ գեղեցիկ ծաղիկ) – *Ֆր. belle-fleur, հոդմաղաբ* (վարագույր, առաջակալ, և ոչ՝ հողմը արգելող) – *Ֆր. paravent, մերկասատույց* (սառցակալում, սառցածածկոց, սառցամածություն, սառցակեղև, և ոչ՝ մերկ սառույց) – *ռուս. голыедуги*: Այսօրինակ պատճենումները լեզվակիրների մոտ բոլորովին այլ մտապատկերներ են արթնացնում, քան օտար բառամիավորների բուն նշանակությունները: Սրանով խախտվում է լեզվական հայտնի օրինաչափությունը, որի համաձայն բառապաշարային միավորի ստեղծման պահին նրա ներքին ձևը չպետք է հակասի նշանակությանը: Հետևաբար, եթե պատճենման երևան գալու պահին հակասություն է առաջանում բնօրինակի ներքին ձևի և արտահայտվելիք հասկացության միջև, ապա նախընտրելի է հրաժարվել պատճենումից և ազատ թարգմանությամբ ստեղծել որևէ համարժեք, որը ճշգրիտ կարտացոլի տվյալ իմաստը: Որպես ընդհանուր կանոն կարելի է նշել հետևյալը. որքան ավելի համարժեք են պատճենված միավորի բառակազմական կաղապարն ու նրա բաղադրիչներից բխող բառիմաստը, այնքան լիարժեք է պատճենումը և՛ ընդհակառակը:

Առանձին ուշադրության է արժանի դարձվածքի պատճենումը, որն ունի խիստ յուրահատուկ բնույթ: Յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանություն իր իմաստային բազմազանության, պատկերավորության և ազգային ինքնատիպության շնորհիվ յուրահատուկ տեղ է գրավում նրա համակարգում: Թարգմանիչը մշտապես ստիպված է «մրցել» բնագրի դարձվածքների հետ՝ մայրենի լեզվում փնտրելով դրանց համարժեքները: Խնդիրն իսկապես դժվարին է: Պետք է հաղորդել դարձվածքի իմաստը, պահպանել նրա պատկերավորությունը, ոճական երանգն ու արտահայտչականությունը՝ աշխատելով այս ամենով հանդերձ մնալ դարձվածաբանության շրջանակներում: Օտար դարձվածքի համարժեքը չգտնելու դեպքում թարգմանիչն ստիպված է այն ներկայացնել նկարագրական թարգմանությամբ կամ պատճենումով: Սակայն դարձվածքի պատճենումը միշտ չէ, որ հաջող է ստացվում, և դա ունի իր պատճառները: Նախ, առկա է բաղադրիչ մասերի դարձվածաբանորեն պայմանավորված կապ, որի շնորհիվ վերաիմաստավորվում է բառակապակցությունը, ստեղծվում դարձվածքի փոխաբերական իմաստը: Այդ կապը մեծ մասամբ հատուկ լինելով միայն տվյալ լեզվին, սկզբունքորեն պատճենման ենթակա չէ: Երկրորդ, լինելով մեկ ժողովրդի լեզվամտածողության, հոգեբանության ու պատկերացումների արդյունք, պատճենված դարձվածքը դժվարությամբ է յուրացվում մեկ այլ ժողովրդի կողմից: Ուստի, դարձվածքի պատճենումն ընդհանուր առմամբ խրախուսելի չէ: Գերադասելի է գործածել մայրենի, թեկուզև մոտավոր համարժեք, իսկ վերջինիս բացակայության դեպքում օտար դարձվածքը փոխարինել հասկանալի թարգմանությամբ, որը կարող է դարձվածալին բնույթ չունենալ. օր. chercher midi à quatorze heures ֆրանսերեն դարձվածքը (բառացի՝ ժամը 14-ին ցերեկվա 12-ը փնտրել) կարող է թարգմանվել «ջինջ

երկնքում ամպ փնտրել» կապակցությամբ, իսկ ռուսերենի птица высокого полета դարձվածքը պատճենումով ներկայացվելու դեպքում (բառացի բարձր թռիչքի թռչուն) որևէ պատկերացում չի կարող տալ դարձվածքի բուն իմաստի մասին հասարակության մեջ բարձր դիրք ունեցող անձ: Այսուհանդերձ, հայերենում կան պատճենված դարձվածաբանական միավորներ, որոնք ընդունելի են. օր. չոր սրտին՝ չոր աչք (սառը վերաբերմունքին՝ սառը պատասխան) — ֆր. à cœur sec, œil sec:

Մենք անդրադարձանք բառապաշարային պատճենումների յուրացումն արգելակող որոշ գործոնների: Սակայն ասվածին պիտի ավելացնել, որ օտար լեզուներից հայերենի կատարած հազարավոր պատճենումների գերակշիռ մեծամասնությունը իմաստի առումով ու բարեհնչությամբ միանգամայն ընդունելի միավորներ են:

Լեզվապատճենումը դիտում ենք ներկառուցվածքային գործընթաց և հայոց լեզվի բառապաշարի հարստացման ամենաարդյունավետ ու պատմականորեն արդարացված ավանդական եղանակներից մեկը, որը, ի տարբերություն փոխառության, չի խաթարում լեզվի համասեռությունը:

А. БАРЛЕЗИЗЯН

АССИМИЛЯЦИЯ ЛЕКСИКО—СЕМАНТИЧЕСКИХ КАЛЕК В НОВОЙ ЛИНГВОКУЛЬТУРНОЙ СРЕДЕ

В статье исследуются синтаксические, словообразовательные и семантические факторы, способствующие или препятствующие ассимиляции лексико—семантических калек в двух вариантах армянского литературного языка (в западноармянском и восточноармянском).

Одновременно подчеркивается мысль о том, что калькирование является одним из основных способов обогащения словарного состава армянского языка, что обусловлено разнообразием активно функционирующих средств словосложения и деривации, а также его многовековыми традициями.

А. BARLEZIZYAN

ASSIMILATION OF LEXICO—SEMANTIC LOAN TRANSLATIONS IN THE NEW LINGVO—CULTURAL ENVIRONMENT

The article studies the syntactic, word-formation and semantic factors supporting or interfering with the assimilation of lexico—semantic loan translations in two norms of the Armenian literary language (West Armenian and East Armenian).

At the same time it is highlighted that loan translation is one of the main ways to enrich the vocabulary of the Armenian language, stipulated by a variety of actively functioning means of word composition and derivation as well as its centuries—old traditions.